Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Արարատի մարզի << Ջրաշենի Ս. Քոլոզյանի անվան միջնակարգ դպրոց >> ՊՈԱԿ – ի քիմիայի (10 դասաժամ), կենսաբանության (12) ուսուցչի թափուր տեղերի համար:

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատվությունը որոշվում է՝ ըստ դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (Ձև 1),
2. Փաստաթուղթ (դիպլոմ)՝ << Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 26 – րդ հոդվածի 1 –ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,
3. Անձնագրի պատճենը,
4. Ինքնակենսագրություն (Ձև 4),
5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),
6. Մեկ լուսանկար՝ 3 x 4 չափի,
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են 2013 թ. դեկտեմբերի 11 – ից մինչև 2014 թ. հունվարի 15 – ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00 – ից 15:00 – ը, բացի շաբաթ, կիրակի և տոն օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա 2014 թվականի հունվարի 20 – ին՝ ժամը 10:00 – ին, Արարատի մարզի Ջրաշենի Ս. Քոլոզյանի անվան միջնակարգ դպրոցում:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (094) 66-75-84 կամ (099) 28-86-31 հեռախոսահամարներով:

Տնօրեն՝ /Ե. Գալստյան

19.12.2013 թ.